ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Պ-434-21.11.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» 2016 թվականի մայիսի 25-ի ՀՕ-54-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 144-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18-րդ մասով.

«18. Մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը՝

1) սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

2) սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասում նշված տեղեկանքը շարունակում է ներկայացվել վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, իսկ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի եւ ելքերի վերաբերյալ տվյալների ամփոփումը, ամփոփ տեղեկանքի կազմումը եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելն իրականացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը .

3) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական վարույթ հարուցելու լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Վարչական վարույթը հարուցվում է, եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չեն ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում.

4) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

5) սույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հայտարարագրերը տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: